8745

Պրոլետարնե՛ր բոլոր յերկրների, միացե՛ք

# ԿՈՄԻՆՏԵՐՆԻ VII ԿՈՆԳՐԵՍԻ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՊԼԱՆ

## Ընկ. ԲԵՐԻԱՅԻ „ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ“ ԶԵԿՈՒՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՊԼԱՆ

ЗКПА
4-68

Ա. ՑԿՈՒՍՀՐԱՏ ● 1935

24 SEP 2006

Պրոլետարնե՛ր բոլոր յերկրների, միացե՛ք

09 DEC 2009

3КП4
4-68
68

# ԿՈՄԻՆՏԵՐՆԻ VII ԿՈՆԳՐԵՍԻ ԶԵԿՈՒՅՑՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՊԼԱՆ

3976
1003
37680

## Ընկ. Բերիայի „ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ" ԶԵԿՈՒՅՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՊԼԱՆ

Կուսակցական յեվ խմբակների համար

213
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникян

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ ● 1935

22 MAY 2013

План Бесед
Для партактива и кружков
по изучению докладов и решений
VII конгресса коминтерна
Армпартиздат, Эривань, 1935

# ԿՈՄԻՆՏԵՐՆԻ VII ԿՈՆԳՐԵՍԻ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՊԼԱՆ

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԿ-Ի ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ
ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՅԵՎ ԱԳԻՏԱՑԻԱՅԻ
ԲԱԺՆՈՒՄ

ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժնի կողմից նամակ է ուղարկված բոլոր յերկրկոմների, մարզկոմների, ազգային կոմկուսակցությունների ԿԿ-ների կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդի բաժինների վարիչներին, ԿԿ-ի պրոպագանդիստական խմբակների վարիչներին, վորով առաջարկվում է Կոմինտերնի 7-րդ կոնգրեսի զեկուցումներն ու վորոշումները կուսժողովներում, կուսակտիվի ժողովներում քննարկելուն և բանվորների ու կոլտնտեսականների հետ կոնգրեսի հիմնական փաստաթղթերի կոլեկտիվ ընթերցանություններ անցկացնելուն զուգընթաց, բոլոր կուսակցական դպրոցներում և խմբակներում կազմակերպել նաև հատուկ պարապմունքներ ընկ. Պիկի, Դիմիտրովի, Երկոլիի և Մանուիլսկու զեկուցումների շուրջը:

Հատուկ ուշադրություն է հրավիրվում պրոպագանդիստների, զեկուցողների, զրուցավարների, ընթերցողների խնամքոտ ընտրության և հրահանգավորման վրա: Պրոպագանդիստների հրահանգավորումը,

սեմինարների ղեկավարությունը և պրոպագանդիստներին ու զեկուցողներին անհատական կարգով կոնսուլտացիա տալը առաջարկվում է դնել յերկրկոմներին և մարզկոմներին կից պրոպագանդիստների և ագիտատորների ակտիվի վրա, վորը ստեղծված է ՀամԿ(բ)Կ վորոշմամբ:

Պրոպագանդիստների և ագիտատորների ակտիվը պետք է ոգտագործվի նաև ստորին պրոպագանդիստներին և ագիտատորներին, կոմունիստներին և անկուսակցական բանվորներին ու կոլտնտեսականներին բացատրելու համար այն հարցերը, վորոնք ծագում են նրանց մոտ Կոմինտերնի կոնգրեսի նյութերն ուսումնասիրելու ընթացքում:

Այդ նպատակի համար առանձնացված բոլոր ընկերները պետք է անհատապես հաստատվեն կուսակցական կոմիտեների բյուրոներում:

Նամակին կցված են Կոմինտերնի 7-րդ կոնգրեսի զեկուցումների և վորոշումների վերաբերյալ զրույցների ստորև տպագրվող պլանները և Կոմունիստական Ինտերնացիոնալի համաշխարհային 7-րդ Կոնգրեսը աշխատանքի արդյունքների վերաբերյալ պոպուլյար զրույցների պլանը քաղկրթության թեկնածուական դպրոցների ու կոմյերիտական դպրոցների համար:



## I. ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՍՏՐԱՏԵԳԻԱՆ ՅԵՎ ՏԱԿՏԻԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ 6-ՐԴ ՅԵՎ 7-ՐԴ ԿՈՆԳՐԵՍՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿՆՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

(Մեկ պարապմունք)

Հիմնական մոմենտները: *Կոմունիստական Ինտերնացիոնալի ուղիղ պատմական աստւղումը և II Ինտերնացիոնալի սնանկությունը: Համաշխարհային կապիտալիզմի ճգնաժամի սրումը և բուրժուական պետությունների փաշիստականացումը: Կապիտալի հարձակումը պրոլետարիատի, գյուղացիության և գաղութների ու կախյալ յերկիրների ժողովուրդների վրա: Քաղաքական դրության սրումը կապիտալիստական յերկիրներում և հեղափոխական շարժման նոր վերելքի աճումը: Սոցիալիզմի հաղթանակը ՍՍՀՄ-ում ուժեղացնում է հեղափոխական շարժման աճումը կապիտալիստական յերկիրներում: Խորհուրդների հաղթական յերթը Չինաստանում: Պրոլետարիատի տնտեսական և քաղաքական պայքարի զարգացումը (գործա-*

զուրկների պայքարը. գործադուլային շարժումը և պրոլետարիատի մյուս հեղափոխական ելույթները): Պրոլետարիատի պարտությունը Գերմանիայում, որպես հետևանք այն բանի, որ սոցիալ-դեմոկրատիան հրաժարվեց ֆաշիզմի դեմ պայքարելուց: Շրջադարձի սկզբնավորումը սոցիալ-դեմոկրատական մասսաների մեջ դեպի պայքարը ֆաշիզմի ու կապիտալիզմի հարձակման դեմ, դեպի միասնական ճակատը կոմունիստների հետ: Փետրվարյան մարտերն Ավստրիայում ու հոկտեմբերյան մարտերն Իսպանիայում և նրանց պարտության պատճառները: Ընդհանուր քաղաքական գործադուլը (1934 թ.) և հակաֆաշիստական հզոր ցույցը Ֆրանսիայում (1935 թ.): Միասնական և ժողովրդական հակաֆաշիստական ճակատի կիրառման հաջողությունները ֆրանսիական կոմկուսակցության կողմից: Կոմինտերնի սեկցիաների աշխատանքն ու վիճակը: Կոմինտերնի 7-րդ կոնգրեսը յեղբայրական կոմկուսակցությունների ներկա էտապի խնդիրների մասին (պայքար միասնական ճակատի համար ընդդեմ աղանդավորական կուսակցությունների. կուսակցության նոր անդամների դաստիարակությունը բոլշևիզմի ոգով. լինել միշտ մասսաների հետ, մասսաների գլուխը. պայքար պրոլետարիատի դաշնակիցների համար. մասսաներին բացատրել Կոմինտերնի ծրագիրը, ստրատեգիան և տակտիկան): Իմպերիալիստների առաջին հերթին գերմանական ֆաշիզմի կողմից պատերազմի պատրաստումը ԽՍՀՄ-ի դեմ: ԽՍՀՄ-ի պաշտպանությունը համաժողովրդական ճակատի յելակետն է: ԽՍՀՄ-ի նկատմամբ կապիտալիստական յերկրների պրոլետարիատի և աշխատավորության նվիրվածու-



թյան ու համակրանքի աճումը: ԽՍՀՄ-ն համաշխարհային պրոլետարական հեղափոխության բազան է և խաղաղության հենարանը:

## ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստալին. *Հաշվետու զեկուցում կուսակցության 17-րդ համագումարին ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի աշխատանքի մասին*, 1-ին բաժին, §§ 1-ին և 2-րդ:

Վ. Պիկ. *Հաշվետվություն Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտեյի գործունեության մասին*. «Պրավդա», 28/VII 1935 թ.; կամ առանձին բրոշյուրով, Կուսհրատ:

Կոմունիստական Ինտերնացիոնալի 7-րդ համաշխարհային կոնգրեսի բանաձևը, *ընդունված 1935 թ. օգոստոսի 1-ին՝ Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտեյի գործունեության մասին ընկ. Վիլհելմ Պիկի հաշվետու զեկուցման առթիվ*. «Պրավդա», 2/VIII. 1935 թ.:

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լենին. *Կոմունիստական Ինտերնացիոնալի II կոնգրեսը: Ազգային և գաղութային հարցերի հանձնաժողովի զեկուցումը 1920 թ. հուլիսի 26-ին*: Յերկերի ժողովածու, 2-րդ և 3-րդ հրատ., հ. XXV:

Ստալին. *Լենինիզմի հիմունքների մասին*: Գլ. VIII—«Ստրատեգիա և տակտիկա»:

Կաշեն. *Ֆրանսիայի կոմկուսակցությունը բարձր է պահում կոմունիզմի դրոշը*. «Պրավդա», 29/VII, 1935 թ.:

Ջժոու Հո-սին. *Չինական խորհուրդները յոթ տարում*: «Պրավդա», 30/VIII, 1935 *թ.*:

Ակկերման. *Ի՞նչպես ենք մենք աշխատում ընդհատակում*: «Պրավդա», 29/VII, 1935 *թ.*:

Գարսիա. *Հեղափոխական պայքարը Կուբայում*: «Պրավդա», 1/VIII, 1935 *թ.*:

Վիդեն. *Մեր ուղին միլիոնավոր սոցիալ-դեմոկրատ պրոլետարների ուղին է*: «Պրավդա», 2/VIII, 1935 *թ.*:



## II. ՖԱՇԻԶՄԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԵՎ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՖԱՇԻԶՄԻ ԴԵՄ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

**(Երկու պարապմունք)**

Հիմնական մոմենտները: *Ֆաշիզմի դասակարգային բնույթը: Ի՞նչ է բերում մասսաներին հաղթանակած ֆաշիզմը: Գերմանական ֆաշիզմի առանձնահատկությունները (գազանական շովինիզմ. գերմանական ֆաշիզմը վորպես իմպերիալիստական պատերազմի հրձիգ և միջազգային իմպերիալիզմի հարվածող բռունցք): Ֆաշիզմը կատաղի, բայց վոչ ամուր իշխանություն է: Ինչպես ֆաշիզմի հաղթանակի անխուսափելիության վերաբերյալ ֆատալիստիկ հայացքների, այնպես էլ ֆաշիստական դիկտատուրայի ավտոմատ խորտակման իլլյուզիայի սխալ ու վնասակար լինելը: Բանվոր դասակարգի միասնական ճակատը ֆաշիզմի դեմ ֆաշիզմի հաղթանակը կանխելու գլխավոր պայման է: Պրոլետարիատի տնտեսական և քաղաքական անմիջական շահերի պաշտպանությունը, նրա պաշտպանությունը*

ֆաշիզմի դեմ միասնական ճակատի յելակետն է ու գլխավոր բովանդակությունը: Միասնական ճակատի հանգուցային հարցերն առանձին յերկիրներում: 7-րդ կոնգրեսը միասնական ճակատի կառավարության—ֆաշիզմի և ռեակցիայի դեմ պայքարելու կառավարության մասին: Միասնական ճակատն այն յերկիրներում, վորտեղ սոցիալ-դեմոկրատները կառավարության մեջ են գտնվում: Կոմունիստների վերաբերմունքը սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների հանդեպ: Կոմունիստների վերաբերմունքը բուրժուական դեմոկրատիայի հանդեպ: Կոմունիստների աշխատանքը ռեֆորմիստական, ֆաշիստական պրոֆմիություններում և պրոլետարիատի բոլոր մասսայական կազմակերպություններում: Լենինը և Ստալինը մյուս կուսակցությունների հետ համաձայնվելու, միասնական ճակատի և կոմկուսակցությունների կողմից լեգալ ու անլեգալ հնարավորություններն օգտագործելու մասին: Կոմինտերնի 7-րդ կոնգրեսը պրոլետարիատի միասնական կուսակցության մասին: Միայն խորհրդային իշխանությունը փրկություն է բերում կապիտալիստական յերկիրների պրոլետարիատին և աշխատավորական մասսաներին:

## ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լենին. *«Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ: IV–X գլուխները: Յերկերի ժողովածու, 2-րդ և 3-րդ հրատ., հ. XXV:*

Դիմիտրով. *Ֆաշիզմի հարձակումը և կոմունիստական Ինտերնացիոնալի խնդիրները ֆաշիզմի դեմ բանվոր դասակարգի միասնության համար մղվող*



*պայքարում: Զեկուցում Կոմինտերնի 7-րդ կոնգրեսին: «Պրավդա», 6/VIII, 1935 թ. կամ առանձին բրոշյուր, Կուսհրատ:*

Դիմիտրով. *Բանվոր դասակարգի միասնության համար: Ընկ. Դիմիտրովի յեզրափակման խոսքը Կոմինտերնի 7-րդ համաշխարհային կոնգրեսում 1935 թ. 13/VIII-ին, «Պրավդա», 15/VIII, 1935 թ.:*

Կոմինտերնի 7-րդ համաշխարհային կոնգրեսի բանաձևերը *Գեորգի Դիմիտրովի—Ֆաշիզմի հարձակումը և Կոմունիստական Ինտերնացիոնալի խնդիրները ֆաշիզմի դեմ բանվոր դասակարգի միասնության համար մղվող պայքարում—զեկուցման առթիվ: «Պրավդա», 29/VIII, 1935 թ.:*

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լենին. *Կոմպրոմիսների մասին. Յերկերի ժողովածու, 2-րդ և 3-րդ հրատ., հ. XXI:*

Լենին. *Զեկուցում Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության միացյալ համագումարի մասին: Գլ. VIII «Համագումարի արդյունքները». Յերկերի ժողովածու, 2-րդ և 3-րդ հրատ., հ. IX:*

Ստալին. *Լենինիզմի հարցերը—Հոկտեմբերյան հեղափոխությունը և ռուսական կոմունիստների տակտիկան... III և IV գլուխները:*

Տորեզ. *Միասնական հակաֆաշիստական ճակատի հաջողությունները. «Պրավդա», 7/VIII, 1935 թ.*

Վան Մին. *Չինական հեղափոխությունը վերելքում, «Պրավդա», 9/VIII,1935 թ.:*

## III. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՈՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

**(Յերկու պարապմունք)**

Հիմնական մոմենտները: *Քաղաքական դրության սրումը կապիտալիստական յերկրներում և պատերազմի պատրաստությունը աշխարհի նոր վերաբաժանման համար: Ճապոնական իմպերիալիզմի ագրեսիան Հեռավոր Արևելքում: Ֆաշիստական Իտալիայի հարձակումը Հաբեշստանի վրա և գաղութային հարցերի սրումը: Գերմանական ֆաշիստները պատերազմի և, առաջին հերթին ԽՍՀՄ-ի դեմ ուղղված պատերազմի գլխավոր հրձիգներն են: Անգլո-ամերիկական հակասությունը գլխավոր հակասությունն է իմպերիալիստների բանակում: Խորհրդային Միության դերը խաղաղության համար մղվող պայքարում: Խորհրդային Միության փոխհարաբերությունները կապիտալիստական յերկրների հետ նոր փուլ են թևակոխել—(իրար վրա չհարձակվելու պայմանագրերը. գործակցությունը փոքր պետությունների հետ և այլն): Կոմինտերնի սեկցիաների պայքարը խաղաղության համար, իմպերիալիստական պատերազմի դեմ: Կոմինտերնի կենտրոնական լոզունգը—պայքար խաղաղության և Խորհրդային Միության պաշտպանության համար: Իմպերիալիստական պատերազմի դեմ մղվող պայքարի զուգորդումը ֆաշիզմի դեմ մղվող պայքարի հետ: Կոմունիստները և ազգային անկախության ու փոքր ժողովուրդների ամբողջականության պաշտպանությունը: պայքարը միլիտարիզմի և սպառազինումների դեմ: Կոմկուսակցությունների աշխատանքը բանակում: Բանվորների և աշխատավոր ազգաբնակչության դաստիարակությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմի վոգով գլխավոր պայմանն է շովինիզմի դեմ մղվող պայքարում: Մասսաների նախապատրաստումը պրոլետարական հեղափոխության համար մղվող պայքարին: Լենինն ու Ստալինն իմպերիալիստական պատերազմը բուրժուազիայի դեմ ուղղված քաղաքացիական պատերազմի վերածելու մասին:*



### ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լենին. *Սոցիալիզմ և պատերազմ: Յերկերի ժողովածու 2-րդ և 3-րդ հրատ., հ.* XXII:

Լենին. *Ծանր, բայց անհրաժեշտ դաս: Յերկերի ժողովածու 2-րդ և 3-րդ հրատ.*, XXII:

Ստալին. *Հաշվետու զեկուցում կուսակցության 17-րդ համագումարին Համ Կ(բ)Կ ԿԿ-ի աշխատանքի մասին, 1-ին բաժին*, § 2:

Երկոլի. *Կոմունիստական Ինտերնացիոնալի խըն-*

*գիրների մասին իմպերիալիստների կողմից նոր համաշխարհային պատերազմ պատրաստելու առնչությամբ: Զեկուցում Կոմինտերնի 7-րդ կոնգրեսին: «Պրավդա»* 19/VIII 1935 *թ., կամ առանձին բրոշյուր, Կուսհրատ:*

Կոմունիստական Ինտերնացիոնալի 7-րդ համաշխարհային Կոնգրեսի բանաձևը *ընկ. Էրկոլիի—Կոմունիստական Ինտերնացիոնալի խնդիրները իմպերիալիստների կողմից նոր համաշխարհային պատերազմ պատրաստելու առնչությամբ զեկուցման առթիվ: «Պրավդա»*, 29 *օգոստոս*, 1935 *թ.:*

## *ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

Լենին. *Քոսի մասին: Երկերի ժողով.* 2-*րդ և* 3-*րդ հրատ., հ.* XXII:

Ստալին. *ԿԿ-ի քաղհաշվետվությունը Համ Կ(բ)Կ* XVI *համագումարին:*

Շվերմա. *Պաշտպանությունը ֆաշիզմի դեմ: «Պրավդա* 17/VIII, 1935 *թ.:*

Անդրե Մարտի. *ԽՍՀՄ աշխատավորության հետ միասին ի պաշտպանություն խաղաղության: «Պրավդա»* 18/VIII, 1935 *թ.:*

Սին-Ի-Տին. *Չինական կոմյերիտմիության հերոսությունը: «Պրավդա»* 20/VIII, 1935 *թ.:*

Կուուսինեն. *Աշխատավորության յերիտասարդ սերունդը պատկանում է կոմունիզմին: «Պրավդա»* 21/VIII, 1935 *թ.:*



## IV. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԽՍՀՄ-ՈՒՄ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՂԹԱՆԱԿ Է

**(Մեկ պարապմունք)**

Հիմնական մոմենտները: *ԽՍՀՄ-ն հաղթանակած սոցիալիզմի յերկիրն է: Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում նոր եպոխա բաց արավ մարդկության պատմության մեջ: Սոցիալիստական շինարարության հիմնական արդյունքները և ԽՍՀՄ-ի աշխատավորության նյութական բարեկեցության բարձրացումը Կոմինտերնի* VI *և* VII *կոնգրեսների միջև ընկնող ժամանակաշրջանում: Պրոլետարիատի և աշխատավորական մասսաների նյութական ու քաղաքական դրությունը կապիտալիստական յերկրներում: Ծանր արդյունաբերությունը վողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման հիմքն է, սոցիալիզմի բազան: Առաջներում ցարիզմի կողմից ճնշվող ազգությունների տնտեսական-քաղաքական և կուլտուրական վերելքը: Սոցիալիստական շինարարության դժվարությունները և նրանց հաղթահարման ուղիները (յերկրի տեխնիկական-տնտեսական հետամնացության հաղթահարում.*

*գյուղի սոցիալիստական վերակառուցումը. դասակար-գային թշնամու դիմադրության ճնշումը. կուսակցու-թյան պայքարը հակալենինյան խմբավորումների դեմ. ԽՍՀՄ-ի կապիտալիստական շրջապատը)։ Պրոլետա-րիատի դիկտատուրան և մեր յերկրի բանվորների դաշինքը ամբողջ աշխարհի բանվորների հետ, նրանց ակտիվ աջակցությունը ԽՍՀՄ-ին հաղթանակի վճռա-կան պայմանն են ԽՍՀՄ-ում։*

*ԽՍՀՄ-ն ամբողջ աշխարհի պրոլետարների հար-վածային բրիգադն է ու հայրենիքը։ Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում նոր ետապ է համաշխարհային պրոլետարական հեղափոխության զարգացման մեջ։ Խորհրդային պետությունը ժողովուրդների ազատու-թյան և խաղաղության հենարանն է։ ԽՍՀՄ-ի պաշտ-պանությունը ֆաշիզմի և կապիտալիզմի դեմ ամբողջ աշխարհի պրոլետարիատի կողմից։ Պրոլետարական ին-տերնացիոնալիզմի գործին մինչև վերջը հավատարիմ լինելը ԽՍՀՄ-ի պրոլետարների սրբազան պարտակա-նությունն է։*

## ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստալին. *Հոկտեմբերյան հեղափոխության մի-ջազգային բնույթը։ Լենինիզմի հարցերը*, 10-րդ հրատ.։

Մանուիլսկի. *Սոցիալիստական շինարարության արդյունքները ԽՍՀՄ-ում։* «*Պրավդա*» 21/VIII 1935 *թ.*։

Կոմունիստական Ինտերնացիոնալի 7-րդ համաշ-խարհային կոնգրեսի բանաձևը *ընկ. Մանուիլսկու*—*Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում և նրա համաշ-խարհային-պատմական նշանակությունը—զեկուցման առթիվ։* «*Պրավդա*», 29/VIII, 1935 *թ.*։

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[redacted]. *Փա՛ռք սոցիալիզմի յերկրին, փա՛ռք նրա ղեկավար Ստալինին։* «*Պրավդա*», 21/VIII, 1935 *թ.*։

Մոլոտով. *Հաշվետու զեկուցում կառավարության աշխատանքի մասին ԽՍՀՄ խորհուրդների* VII *համա-գումարին*, 1935 *թ. հունվարի* 28-*ին. առանձին բրո-շյուր, Կուսհրատ։*

3976
1008/37680
ՀՍԽՀ ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публ. Библиотека ՀՍԽՀ-ССР им. А. Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## ՊՈՊՈՒԼՅԱՐ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՊԼԱՆԸ

**Կոմունիստական Ինտերնացիոնալի 7-րդ համաշխարհային կոնգրեսի աշխատանքի արդյունքների շուրջը քաղկրթության թեկնածուական դպրոցների յեվ կոմյերիտական դպրոցների համար:**

### ԱՌԱՋԻՆ ԶՐՈՒՅՑ. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ *VI* ՅԵՎ *VII* ԿՈՆԳՐԵՍՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿՆՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

*Զրույցի մեջ անհրաժեշտ է ցույց տալ.*

1. *Ի՞նչպես է բուրժուազիան յելք փնտրում համաշխարհային կապիտալիզմի ճգնաժամի սրումից և փորձում է կանխել հեղափոխական շարժման աճումը կապիտալիստական յերկրներում ֆաշիզմի դիկտատուրա հաստատելու և պատերազմ պատրաստելու ճանապարհով (Գերմանիա և այլն):*

2. *Ի՞նչպես է սոցիալիզմի հաղթանակը ՍՍՀՄ-ում ազդում հեղափոխական շարժման աճման վրա կապիտալիստական յերկրներում և ֆաշիստական դիկտատուրայի սարսափները Գերմանիայում սրում են դասակարգային պայքարը ֆաշիզմի դեմ բոլոր կապիտալիստական յերկրներում (փետրվարյան մարտերն Ավստրիայում, հոկտեմբերյան մարտերն Իսպանիա-*



*յում, ընդհանուր գործադուլը* (1934 *թ.*) *և հզոր ցույցը* (1935 *թ.*) *Ֆրանսիայում և այլն:*

3. *Ի՞նչպես դիտակից պրոլետարները կոմունիստական կուսակցությունների ղեկավարությամբ ստեղծում են միասնական պրոլետարական և ժողովրդական ճակատ ֆաշիզմի և պատերազմի դեմ (Ֆրանսիա):*

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պիկ. *Զեկուցում Կոմինտերնի* VII *Կոնգրեսում:*
Բանաձև *ընկ. Պիկի զեկուցման առթիվ:*

### ՅԵՐԿՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ. ՖԱՇԻԶՄԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՅԵՎ ՖԱՇԻԶՄԻ ԴԵՄ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ԽՆԴԻՐԸ

*Զրույցի մեջ անհրաժեշտ է ցույց տալ.*

1. *Ինչո՞ւ ֆաշիզմը բանվոր դասակարգի, ամենավոխերիմ թշնամին է և ի՞նչ է նա բերում բանվորներին ու աշխատավորներին:*

2. *Ի՞նչ բանի հետևանքով ֆաշիզմն իշխանության գլուխն անցավ Գերմանիայում (բուժուազիայի անընդունակությունը՝ կառավարելու հին մեթոդներով, սոցիալ-դեմոկրատիայի հրաժարումը ֆաշիզմի դեմ մղվող պայքարից): Ինչո՞ւ ֆաշիզմը կատաղի, բայց վոչ ամուր իշխանություն է և ի՞նչ է հարկավոր ֆաշիզմի տապալման համար:*

3. *Ինչո՞ւ ֆաշիզմի դեմ բանվոր դասակարգի միասնական ճակատի ստեղծումը ֆաշիզմի հաղթանակը կանխելու գլխավոր պայմանն է և ի՞նչն է հանդիսանում ֆաշիզմի դեմ միասնական ճակատի համար մղվող պայքարի յելակետն ու գլխավոր բովանդակությունը:*

## ՅԵՐՐՈԴ ԶՐՈՒՅՑ (ՅԵՐԿՐՈՐԴ ԶՐՈՒՅՑԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ)

*Զրույցի մեջ անհրաժեշտ է ցույց տալ.*

1. *Կապիտալիստական յերկրների կոմունիստական կուսակցությունները ի՞նչպես պետք է վերաբերվեն սոցիալ-դեմոկրատական բանվորներին, ֆաշիզմի դեմ բուրժուական դեմոկրատիայի մնացորդների պաշտպանությանը և միասնական ճակատի կառավարությանը—ֆաշիզմի և ռեակցիայի դեմ պայքարելու կառավարությանը:*

2. *Ինչո՞ւ կապիտալիստական յերկրների կոմունիստները պետք է աշխատեն ռեֆորմիստական ու ֆաշիստական պրոֆմիություններում և պրոլետարիատի մյուս մասսայական կազմակերպություններում: Լենինն ու Ստալինն ի՞նչպես են սովորեցրել մեր կուսակցությանը ժամանակավոր համաձայնություններ կնքել մյուս կուսակցությունների հետ, յերբ այդ անհրաժեշտ է հեղափոխության հաղթանակի համար, օգտագործել լեգալ և անլեգալ հնարավորությունները գլխավոր թշնամու հանդեպ հաղթանակն ապահովելու համար:*

3. *Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում ցույց է տալիս, որ միայն խորհրդային իշխանությունը փրկություն է բերում կապիտալիստական յերկրների պրոլետարիատին ու աշխատավորական մասսաներին ֆաշիզմից և կապիտալիզմից, իմպերիալիստական պատերազմներից:*

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Դիմիտրով. *Զեկուցումը և յեզրափակման խոսքը Կոմինտերնի 7-րդ կոնգրեսում:*
2. Բանաձև *ընկ. Դիմիտրովի զեկուցման առթիվ:*



## ՉՈՐՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ. ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՈՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

*Զրույցի մեջ անհրաժեշտ է ցույց տալ.*

1. *Ի՞նչպես է պատրաստվում իմպերիալիստական պատերազմը աշխարհի նոր վերաբաժանման համար (Ճապոնիայի իմպերիալիստական քաղաքականությունը Հեռավոր Արևելքում և ֆաշիստական Գերմանիայի կողմից պատերազմի պատրաստումը Յեվրոպայում, ֆաշիստական Իտալիայի հարձակումը Հաբեշստանի վրա և այլն): Ինչպես գերմանական ֆաշիզմը և ճապոնական զինվորականությունը պատերազմ են պատրաստում Խորհրդային Միության դեմ:*

2. *Ի՞նչպես է Խորհրդային Միությունը պայքարում խաղաղության համար և խաղաղության միակ հենարանն է հանդիսանում ամբողջ աշխարհում: (Համաձայնության կնքումը Ֆրանսիայի և Չեխոսլովակիայի հետ, գործակցությունը փոքր պետությունների հետ և այլն):*

3. *Կոմունիստական կուսակցությունները ի՞նչպես պետք է պայքար մղեն խաղաղության համար, Խորհրդային Միության համար, իմպերիալիստական պատերազմի և ֆաշիզմի դեմ: Ի՞նչպես են նրանք վերաբերվում փոքր ժողովուրդների ազատագրական պատերազմին, ի՞նչպես են պայքար մղում շովինիստական մոլուցքի դեմ, սպառազինումների դեմ, և ի՞նչպես են նրանք աշխատում իմպերիալիստական պետությունների բանակների շարքերում:*

4. *Լենինն ու Ստալինն ի՞նչպես էյին պայքարում իմպերիալիստական պատերազմը վերածելու քաղաքա-*

ցիական պատերազմի — բուրժուազիայի դեմ, պրոլետարական հեղափոխության հաղթանակի համար։

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Երկոլի. *Ձեկուցում Կոմինտերնի 7-րդ կոնգրեսում։*

2. Բանաձև ընկ. *Երկոլիի զեկուցման առթիվ։*

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ. ԽՍՀՄ-ՈՒՄ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ — ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

*Զրույցի մեջ անհրաժեշտ է ցույց տալ.*

*1. Լենին-Ստալինի կուսակցությունն ի՞նչպես վերջնականապես և անվերադարձ կերպով ապահովեց սոցիալիզմի հաղթանակը յերկրագնդի մեկ վեցերորդական մասում և ի՞նչպես սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում նոր եպոխա բաց արավ համաշխարհային հեղափոխության զարգացման մեջ (ցույց տալ սոցիալիստական շինարարության հիմնական արդյունքները ԽՍՀՄ-ում և նրանց նշանակությունը ամբողջ աշխարհի աշխատավորության համար)։*

*2. Ի՞նչպես են քաղաքականապես, տնտեսապես և կուլտուրապես աճում, ծաղկում ու ամրանում առաջներում ցարիզմի կողմից ճնշվող ժողովուրդները, ի՞նչպես է ամրանում այդ ժողովուրդների միասնական ինտերնացիոնալ, յեղբայրական դաշինքը, գործնականապես ցուցադրվում է լենին-ստալինյան ազգային քաղաքականության հաղթանակը։*

*3. Ի՞նչպես Լենին-Ստալինի կուսակցությունը հաղթահարեց դժվարությունները սոցիալիզմի հաղթանակի ճանապարհին (տեխնիկական — տնտեսական և կուլտուրական հետամնացության հաղթահարումը, դասակարգային թշնամիների և նրանց գործակալների դիմադրության ճնշումը, հակակուսակցական խմբավորումների ջախջախումը, պայքար կապիտալիստական յերկիրների նկատմամբ տնտեսական և տեխնիկական անկախության համար և այլն)։ Ի՞նչպես մեզ օգնեցին ամբողջ աշխարհի պրոլետարները ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակի համար մղվող պայքարում։*

*4. Ի՞նչպես մեր կուսակցությունն ընկ. Ստալինի գլխավորությամբ ամրացնում է ԽՍՀՄ-ն ազատության ու խաղաղության այդ հենարանն ամբողջ աշխարհում և համաշխարհային պրոլետարիատի այդ հայրենիքը։*

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Մանուիլսկի. *Զեկուցում Կոմինտերնի 7-րդ Կոնգրեսում։*

2. [redacted]. *Հայտարարությունը ընկ. Մանուիլսկու զեկուցման առթիվ։*

---

# ԸՆԿ. ԲԵՐԻԱՅԻ „ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ“ ԶԵԿՈՒՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՊԼԱՆ

## ԸՆԿ. ԲԵՐԻԱՅԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ՊԵՏՔ Է ԴԱՌՆԱ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲՈԼՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յերկրկոմների, Մարզկոմների, Ազգային կոմկուսակցությունների կենտկոմների կուլտուրայի ու լենինիզմի պրոպագանդի բաժինների բոլոր վարիչներին, Կենտկոմի պրոպ խմբերի ղեկավարներին, Մոսկվայի քաղաքային կոմիտեի կուլտպրոպ բաժնի վարիչին, Լենինգրադի քաղաքային կոմիտեի կուլտ պրոպ բաժնի վարիչին, ՀամԼԿՅԵՄ-ի կենտկոմին, Հաղորդակցության ճանապարհների ժողկոմատի, Ջրային տրանսպորտի ժողկոմատի, Քաղաքացիական ոդանավատորմի, Խորհտընտժողկոմատի, Սննդարդյունաբերության ժողկոմատի և Հյուսիսային ծովային ճանապարհի քաղվարչությունների պետերին

*ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կուսակցական պրոպագանդի ու ագիտացիայի բաժինն առաջարկում է կազմակերպել ընկ. Բերիայի՝ «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» զեկուցման ուսումնասիրումը, կուսակցական ակտիվի, պրոպագանդիստների ու կուսակցականների հետ, զեկուցում, վորը նոր ամենահարուստ նյութ է տալիս ընկ. ՍՏԱԼԻՆԻ՝ վորպես մեր կուսակցության առաջնորդի ու տեսաբանի դերի մասին:*

*Կուսակտիվի ու պրոպագանդիստների համար կազմակերպել ընկ. Բերիայի զեկուցումը ուսումնասիրելու հատուկ սեմինարներ: Պրոպագանդիստների դասընթացներում այդ զեկուցման շուրջն անցկացնել առնվազն յերեք պարապմունք:*

*Կուսակցության պատմության խմբակներում կազմակերպել յերկու մատչելի զրույց: Հետագա պարապմունքների ընթացքում ընկ. Բերիայի զեկուցումն ոգտագործել վորպես պարտադիր ձեռնարկ:*

*Կուսակցության պատմության սիստեմատիկ դասընթացն ավարտած խմբակներում լրացուցիչ կերպով ուսումնասիրել ընկ. Բերիայի զեկուցումը՝ 2—3 պարապմունքներում:*

*Առարկայական խմբակներում (լենինիզմի, պատմական մատերիալիզմի և այլն) ընկ. Բերիայի զեկուցման ուսումնասիրությանը նվիրել 2 պարապմունք:*

*Քաղգրագիտության դպրոցների ունկնդիրների համար ընկ. Բերիայի զեկուցման շուրջը կազմակերպել մեկական զրույց:*

*Կուսակցության պատմության խմբակներում և քաղգրագիտության դպրոցներում անցկացվելիք զրույցների պլանը կցվում է:*

ՀամԿ (բ) Կ Կենտկոմի կուսակցական պրոպագանդի ու ագիտացիայի բաժնի վարիչ՝

Ա. ՍՏԵՑԿԻ

ԸՆԿ. ԲԵՐԻԱՅԻ «ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ» ԶԵԿՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՆԵՆԱԼԻՔ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՊԼԱՆԸ

Ի՞նչպես էր ընկ. Ստալինը (ընկ. ընկ. Կեցխովելու և Ցուլուկիձեյի հետ միասին) ստեղծում բոլշևիկյան կազմակերպություն Անդրկովկասում: Հեղափոխական մարքսիզմի ի՞նչպիսի թշնամիների դեմ մղվող պայքարում նա կոփեց լենինյան կուսակցության ամենահին ու խոշորագույն կազմակերպություններից մեկը:

Ի՞նչպես էր ընկ. Ստալինը հետևողականորեն կիրառում օպորտունիստների մերկացման և նրանցից՝ որպես բուրժուազիայի գործակալներից՝ պառակտվելու լենինյան գիծը և ի՞նչպես նվաճեց Թիֆլիսի, Բաթումի ու պրոլետարական Բաքվի բանվորական մասսաներին:

Ի՞նչպես էր ընկ. Ստալինը մերկացնում մենշևիկների օպորտունիստական տակտիկան և Անդրկովկասի բանվորներին ու գյուղացիներին պայքարի հանում ցարիզմի ու բուրժուազիայի դեմ, ռուսական առաջին հեղափոխության շրջանում:



Ի՞նչպես էին ընկ. Ստալինը և Անդրկովկասի բոլշևիկները պայքարում լիկվիդատորների ու հաշտվողականների դեմ, հանուն բոլշևիկյան կուսակցության՝ որպես միակ հեղափոխական ու պրոլետարական կուսակցության՝ պահպանման ու ամրացման և հանուն մասսաներին հեղափոխության նոր վերելքի համար նախապատրաստելու:

Ի՞նչպես էր ընկ. Ստալինը մենշևիկների ու բոլոր տեսակի օպորտունիստների դեմ մղվող պայքարում պաշտպանում մարքսիստական — լենինյան տեսության անաղարտությունը, զարգացնում այն ու հասցնում ե՛լ ավելի բարձր աստիճանի:

Ի՞նչպես էր ընկ. Ստալինը պայքարում Վրաստանի կոմունիստական կուսակցության մեջ յեղած նացիոնալ-ուկլոնիստների դեմ՝ հանուն լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի, հանուն Անդրկովկասյան սոցիալիստական ֆեդերացիայի ստեղծման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.— Լ. Բերիա՝ «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը»:

## ԸՆԿ. ԲԵՐԻԱՅԻ «ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ» ԶԵԿՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿՆԵՐՈՒՄ ՈՒՆԵՆԱԼԻՔ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՊԼԱՆԸ

### I. *ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՆՈՒՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄԱՐՔՍԻԶՄԻ ՅԵՎ ՆՈՐ ՏԻՊԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ՝ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ* (1897—1904 *թ.*)

Հիմնական մոմենտներ— *ընկ. ընկ.* Ստալինի, *Կեցխովելու և Ցուլուկիձեյի պայքարն Անդրկովկասի «լեգալ մարքսիստների» դեմ՝ հանուն հեղափոխական մարքսիզմի: Ընկ.* Ստալինն *ի՞նչպես կազմակերպեց Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական՝ իսկրայական-լենինյան ուղղության առաջին կազմակերպությունները (ՌՍԴԲԿ-ի Թիֆլիսի, Բաթումի կոմիտեներ): Ընկ.* Ստալինի *կազմակերպչական ու պրոպագանդիստական աշխատանքը բանվորական խմբակներում: Ի՞նչպես նախապատրաստեց ընկ.* Ստալինը *Բաթումի գործադուլը* (1902 *թ.*): *Ի՞նչպես էր ընկ.* Ստալինը *պայքարում տարերայնության ոպորտունիստական «տեսության» դեմ՝ հանուն կուսակցության կազմակերպման լենինյան պլանի: ՌՍԴԲԿ-ի յերկրորդ համագումարը և ընկ.* Ստալինի *պայքարն Անդրկովկասի մենշևիկների պառակտողական գործունեության դեմ: Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության խեղաթյուրումը Մախարաձեյի, Ցենուկիձեյի և ուրիշների աշխատություններում: Ընկ.* Ստալինի *փախուստն աքսորից* (1904 *թ.*) *և պայքարը հանուն կուսակցության յերրորդ համագումարի: Ի՞նչպես էր ընկ.* Ստալինն *Անդրկովկասի բանվորներին ու գյուղացիներին պայքարի հանում ընդդեմ ցարիզմի ու բուրժուազիայի ռուսական առաջին հեղափոխության շրջանում: Մենշևիկների, անարխիստների և ուրիշների դեմ մղվող անհաշտ պայքարում ընկ.* Ստալինի *ղեկավարությամբ աճեցին ու ամրացան Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները:*

*ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.*— Լ. Բերիա՝ *«Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը», առաջին և յերկրորդ բաժիններ:*

### II. *ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ՊԱՅՔԱՐԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԱՄՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՈՒ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐՍՈՒՄ ՅԵՂԱԾ ՆԱՑԻՈՆԱԼ-ՈՒԿԼՈՆԻՍՏՆԵՐԻ ԴԵՄ:*

Հիմնական մոմենտներ— *Ի՞նչպես էր ընկ.* Ստալինը *պայքարում մենշևիկների դեմ* 1905 *թվականի հե-*

ղափոխության պարտությունից հետո: Հեղափոխության մենշևիկյան «սեխմայի» մերկացումն ընկ. Ստալինի կողմից: Ի՞նչպես էր ընկ. Ստալինը պայքարում կուսակցության պահպանման ու ամրացման համար՝ ընդհատակի շրջանում: Ընկ. Ստալինի պայքարը լիկվիդատորների դեմ և անկուսակցական համագումարի գաղափարի մերկացումը: Ընկ. Ստալինի և անդրկովկասյան բոլշևիկների պայքարը հաշտվողականների դեմ (Մախարաձե և ուրիշներ): Ի՞նչպես էր ընկ. Ստալինը պայքարում պրոլետարիատի շարքերի միասնության համար, բանվորներին մենշևիկներից մեկուսացնելու համար: Ընկ. Ստալինի աշխատանքը Բաքվում և Բաքվի բոլշևիկյան կազմակերպության ստեղծումը: Բաքվի բանվորների գործադուլը (1908 թ.) և նրա նշանակությունը ռուսական հեղափոխական շարժման համար: Մենշևիկների դեմ անդրկովկասյան բոլշևիկների մղած պայքարի պատմության խեղաթյուրումը Մախարաձեյի և ուրիշների աշխատություններում: Ի՞նչպես էր ընկ. Ստալինը պայքարում Վրաստանի կոմունիստական կուսակցության մեջ յեղած նացիոնալ-ուկլոնիստների դեմ՝ հանուն լենինյան ազգային քաղաքականության, հանուն Անդրկովկասյան սոցիալիստական ֆեդերացիայի ստեղծման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—Բերիա՝ «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը», յերրորդ և չորրորդ բաժիններ:



Թարգմ. Հ. Լեվոնյան, խմբ. Ս. Կիրակոսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան, սրբ. Վ. Ջիդեջյան

▲

Գլավլիտի լիազոր № C—69, հրատ. № 313
Պատվեր № 315, տիրաժ 2000, ինդեքս П—17

▲

Հայկուսհրատի տպարան, Ալլահվերդյան № 27
Յերեվան, 1935

ՀՀ Ազգային գրադարան
NL0188956

Գինը 40 կ.

ЦЕНА 40 К.

План Бесед

Для партактива и кружков
по изучению докладов и решени
VII конгресса коминтерна

Армпартиздат, Эривань